



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ

☎ 4-61-92  
Fax 2-28-77

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2013թ.

<<ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆԻ>> ՀԱՄԱԿԱՐԳՈՂ  
ՏԻԿԻՆ ԱՂԱՎՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Ձեր՝ 21.11.2013թ. թիվ AA/68 գրությանը.  
Հարգելի տիկին Եղիազարյան.

Ձեր գրության 1-ին կետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը տեղեկատվությանը չի տիրապետում, քանի որ դրանք անմիջականորեն չեն առնչում վարչության գործառնությունների հետ, դրանք ավելի շուտ վիճակագրական բնույթ ունեն և մեր բնագավառների տիրույթից դուրս են:

Ինչ վերաբերում է 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման խնդիրներին Ձեզ եմ ներկայացնում մարզպետարանում եղած տեղեկատվությունը:

1.Վանաձոր քաղաքում քանդված 4775 բնակարանի դիմաց կառուցվել է 5067 բնակարան: Անօթևանների ցուցակում մնում է միայն 16 ընտանիք և 2014թ. կկառուցվի մեկ շենք և բազմաբնակարանային շենքերում բնակարան կորցրած ընտանիքների բնակապահովման խնդիրը կփակվի:

2.Սպիտակ քաղաքում մնում է կառուցել 49 մեկ սենյականոց բնակարան և կլուծվի բազմաբնակարանային շենքերում բնակարան կորցրած ընտանիքների բնակապահովման հարցը:

3.Ստեփանավան քաղաքում աղետի հետևանքով բազմաբնակարանային շենքերում քանդված բնակարանների դիմաց բոլոր շահառուները ապահովվել են բնակարաններով:

4. Գյուղական 33 համայնքներում առ 01.12.2008թ. հաշվառվել էր 1712 երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիք: Պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2009-2013թ.թ. կառուցվել է 632 բնակելի տուն, 6 ընտանիքի բնակարանային պայմանները բարելավվել է ԲԳՎ-ների միջոցով /բնակարանի գնման վկայական/, 248 մեկ սենյակի հավակնող ընտանիք ստացել է ֆինանսական աջակցություն, յուրաքանչյուրը՝ 3մլն դրամի չափով, 419 բնակելի տան շինարարությունը գտնվում է ընթացքի մեջ:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ